ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղաք Երևան «21» փետրվար 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 12-Ա/Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC-ARMENIA 2024/2»» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի փետրվարի 19-ի N 242-Ա/2 հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024/2»» մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը, մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:
2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝
   2.1. ապահովել մրցույթի հայտ ներկայացնողների համար խորհրդատվության տրամադրումը,
   2.2. կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,
   2.3. ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

2.4. ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ